ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ՎԱՆԱՁՈՐԻ
ՄԱՆԿԱՏՈՒՆ**

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ТРУДА И
СОЦИАЛЬНЫХ ВОПРОСОВ
ВАНАДЗОРСКИЙ
ДЕТДОМ**

**REPUBLIC OF ARMENIA, MINISTRY OF SOCIAL INSURANCE, VANADZOR ORPHANAGE**

✉ 377200, ՀՀ, ք. Վանաձոր, Տարոն - 2, ՔՇՀ - 4 ☎ 6 – 01 – 20, 6 – 26 – 89
РА, г. Ванадзор, Тарон - 2, ГСК - 4
RA, VANADZOR, Taron - 2, TBK - 4

N 466

« 14 » Նոյեմբերի 2014թ.

**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին**

**Հարգելի մասնակից**

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Վանաձորի մանկատուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՎՄ-15/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-4 հասցեով, մինչև 2014թ. նոյեմբերի 26–ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Ղարաքեշիշյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Վանաձորի մանկատան շենքում, ՀՀ, ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-4 հասցեում, 2014թ. նոյեմբերի 26–ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Վանաձորի մանկատուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը:

<<Վանաձորի մանկատուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման (որոնք կազմված են 1-92 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1-4 հավելվածներում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Վանաձորի մանկատուն>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mankatun@mail.ru:

Եթե Հրամանով նախատեսված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է Պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները:

-նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին, ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

**Հարգանքով՝ Վանաձորի
մանկատան տնօրեն** **Ա. Հարությունյան**